ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №

ԻՆՏԵՐՆԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Մասիս . . 202 թ.

«ԿԻՄ-ՌԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս՝ ընկերության տնօրեն Էդմոնդ Հովիկի Ստեփանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից _____, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից, (այսուհետ՝ Օպերատոր և Բաժանորդ, միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Օպերատորը պարտավորվում է սահմանված կարգով Բաժանորդին մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունը և վճարել դրա դիմաց:

1.2. Սույն Պայմանագրի իմաստով մատուցվող Ծառայություն է համարվում Օպերատորի կողմից մալուխի, Wi-Fi ռուտերի կամ այլ սարքի միջոցով Բաժանորդի միացումը համացանցին:

1.3. Մատուցված Ծառայության արժեքը, ըստ ընտրված Սակագնային պլանի՝ _____ կազմում է ամսական __000 ՀՀ դրամ:

1.4. Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունների ցանկը, ըստ սակագնային պլանի և արժեքի, բերված է ներքոնշյալում:

Սակագնային պլան	Մինչև ՄԲ/Վ	գինը ՀՀ դրամ	Նշել նախընտրած սակագնային պլանը (ստորագրություն)
			✓

2. Սակագները և վճարման կարգը

2.1. Ծառայությունների նկատմամբ կիրառվում են Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային Պլանի /Փաթեթի/ համար Օպերատորի կողմից սահմանված սակագները, որոնք հրապարակված են Օպերատորի վեբ կայքում և ներկայացված են Օպերատորի սպասարկման կենտրոնում:

2.2. Օպերատորի կողմից մատուցվող ծառայությունները իրականացվում են կանխավճարային եղանակով:

2.3. Ծառայությունների մատուցումը իրականացվում են հաստատատագրված վճարումներով, ծառայությունների համար բաժանորդը կատարում է կանխավճար, առնվազն մեկ ամսվա համար, իսկ հաջորդ վճարումը կատարվում է բաժանորդի կողմից՝ մինչև կանխավճարի սպառումը:

2.4. Առանձին դեպքերում Օպերատորը կարող է փոփոխության ենթարկել Բաժանորդների կողմից Ծառայությունների վճարումների կարգը, ժամկետները և եղանակը: Ցանկացած դեպքում Բաժանորդն է պարտավոր անձամբ ճշտել իր ամսական պարտքը և ինքն է պատասխանատվություն կրում այն ժամանակին վճարելու համար:

2.5. Բաժանորդի օգտին վճարում կատարող ցանկացած անձ, վճարումներ կատարելու մասով, համարվում է Բաժանորդի կողմից պատշաճ կերպով լիազորված և վերջինիս անունից գործող:

2.6. Անկախ վճարման ձևից և եղանակից, Բաժանորդը պարտավոր է վճարումները կատարել ժամանակին և պատշաճ կարգով:

2.7. Սույնով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Օպերատորին՝ ուղղումներ կատարելու սխալ վճարումներում, ներառյալ սխալ վճարման փոխանցումը Բաժանորդի հաշվից ճիշտ հասցեատիրոջը:

2.8. Եթե Բաժանորդն ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող այնպիսի սերտիֆիկացված Սարք, որով, ըստ Օպերատորի մասնագետների հնարավոր կլինի օգտվել Օպերատորի կողմից մատուցվող Ծառայություններից, ապա Օպերատորը կարող է Բաժանորդի ցանկությամբ, համապատասխան ցանցային միացումներն ապահովելով, վերջինիս մատուցել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունները:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Օպերատորն իրավունք ունի՝

3.1.1. Բաժանորդից պահանջել ժամանակին վճարել սույն Պայմանագրով սահմանված Ծառայության /ների/ դիմաց:

3.1.2. Մատուցվող Ծառայությունների դիմաց վերջինիս կողմից նախորոք՝ ամսվա սկզբից վճարումներ չկատարելու դեպքում, դադարեցնել ծառայությունների մատուցումը մինչև վերջինիս կողմից վճարի կատարումը:

3.1.3. Միակողմանի դադարեցնել (լուծել) սույն պայմանգիրը, առանց այդ մասին Բաժանորդին նախապես զգուշացնելու (ծանուցելու), Պայմանագրի որևէ պայմանի, կետի խախտման, ինչպես նաև եթե Բաժանորդը չի վճարում իրեն մատուցվող Ծառայությունների համար 1 (մեկ) ամսից ավելի և (կամ) չի շարունակում օգտվել Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններից: Այս դեպքում Օպերատորի կողմից սույն Պայմանագիրը միակողմանի դադարեցվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրի 3.4.2. կետով Օպերատորին վճարել տուժանք: Ընդ որում, սույն պայմանգիրը կհամարվի դադարեցված (լուծված) ՝ միայն Բաժանորդի կողմից սույն պայմանագրի հիման վրա Օպերատորի հանդեպ ունեցած ողջ վճարային պարտավորությունները կատարելուց և ինչպես նաև յոթօրյա ժամկետում՝ Սարք(եր)ը պատշաճ կերպով հանձնման-ընդունման ակտով Օպերատորին հանձնելուց հետո:

3.1.4. Բաժանորդի կողմից ինտերնետ մուտքի հնարավորությունը ինտերնետի մյուս բաժանորդների նկատմամբ վնասակար գործողություններ իրականացնելու դեպքում, ինչպիսիք են՝ SPAM-ի ուղարկումը, DDOS հարձակումը, հակաօրենսդրական գործողությունների խրախուսող նյութերի տարածումը, ցանցում գտնվող համակարգիչների նկատմամբ ծրագրային կամ ապարատային ոտնձգությունները (հակերություն), Օպերատորն իրավունք ունի դադարեցնել Ծառայությունների մատուցումը:

3.1.5. Կարճաժամկետ սահմանափակում կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ՝ ելնելով տեխնիկական անհրաժեշտությունից:

3.1.6. Հավելյալ Ծառայությունների համար Բաժանորդից պահանջել առանձին վճար:

3.1.7. Բաժանորդի տարածքում ցանցային միացումներ կատարելու համար Բաժանորդից պահանջելու միացման վճար, եթե Օպերատորի կողմից օգտագործված նյութերի քանակը և կատարված աշխատանքների ծավալը գերազանցում են Օպերատորի կողմից սահմանված նորմերը և եթե դա նախօրոք համաձայնեցվել է Բաժանորդի հետ:

3.1.8. Դատական կարգով Բաժանորդից գանձել Ծառայությունների և այլ պարտավորությունների դիմաց չվճարված գումարները:

3.2. Օպերատորը պարտավոր է՝

3.2.1. Պայմանագիրը ստորագրելուց հետո Բաժանորդին տրամադրել ծածկանուն և ծածկագիր:

3.2.2. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով:

3.2.3. Անհրաժեշտ տեխնիկական հնարավորությունների առկայության և սույն Պայմանների պահանջները բավարարելու դեպքում Պայմանագիրը ստորագրելուց հետո 10(տաս) օրվա ընթացքում, իր միջոցներով իրականացնել ծառայությունների մատուցումը: Անհրաժեշտության դեպքում կարող է տեղադրվել սարք կամ այլ սարքավորումներ, որը տրամադրվում է Բաժանորդին օգտագործման իրավունքով, հանձնման-ընդունման ակտով:

3.2.4. Բաժանորդի իրազեկմամբ 48 (քառասունութ) աշխատանքային ժամերի ընթացքում վերացնել բաժանորդի մոտ ի հայտ եկած թերությունները,

3.2.5. Մատուցվող Ծառայությունների որակը և ծավալը կարող է սահմանափակվել կամ ընդհատվել վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների ժամանակ, որոնց մասին, հնարավորության դեպքում, Օպերատորը պետք է նախօրոք տեղեկացնի Բաժանորդին:

3.3. Բաժանորդն իրավունք ունի՝

3.3.1. Պահանջել Օպերատորից Պայմանագրով նախատեսված Ծառայությունների իրականացում: Սահմանված ժամանակահատվածում Օպերատորի կողմից իր պարտականությունների ոչ պատշաճ իրականացնելը հարգելի է, եթե ի հայտ են եկել անլուծելի տեխնիկական խնդիրներ:

3.3.2. Դադարեցնել (լուծել) սույն պայմանագիրը՝ վճարելով տվյալ պահին իրեն մատուցված ծառայության պարտքի գումարը, պայմանագրի 3.4.2. կետով սահմանված տուժանքի գումարը և Օպերատորին հանձնման-ընդունման ակտով հետ վերադարձնելով իրեն տրամադրված Սարք(եր)ը՝ գրավոր տեղեկացնելով Օպերատորին մինչև հաջորդող ամսվա 1-ը:

3.4. Բաժանորդը պարտավոր է՝

3.4.1. Պայմանագրով սահմանված կարգով վճարել մատուցվող ծառայության դիմաց:

3.4.2. Մնալ Օպերատորի բաժանորդ Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ըստ ընտրված սակագնային պլանի, ունենալով պարտադիր բաժանորդագրման 12 ամսյա վճարներ: Այն դեպքում երբ առկա չի լինի Բաժանորդի կողմից 12 ամսյա պարտադիր բաժանորդագրման վճարները, Բաժանորդային պայմանագիրը Օպերատորի կամ Բաժանորդի կողմից դադարեցվելու (լուծելու) դեպքում Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին վճարել տուժանք՝ 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

3.4.3. 3.4.2. կետով սահմանված պարտավորվածությունը համարվում է պատշաճ կատարված, եթե Բաժանորդի կողմից ամբողջությամբ վճարված են 12 (տասներկու) ամիսների ամսավճարները:

3.4.4. Օպերատորի կողմից տրամադրված կամ երաշխավորված Սարքերը չօգտագործել այլ սարքավորումների հետ, որոնք կարող են ազդել Օպերատորի ցանցի կամ Սարքի ապահով և անխափան աշխատանքի վրա:

3.4.5. Սարքավորման վրա նշված էլեկտրական լարման տիրույթում վերջինիս համար ապահովել էլեկտրական հոսանք:

3.4.6. Ցանկացած դեպքում ծառայությունների մատուցման թերությունները վերացնելու նպատակով թույլ տալ Օպերատորի ներկայացուցչին աշխատել Ցանցի, Սարքի, այլ սարքավորումների վրա,

3.4.7. Եթե Օպերատորի կողմից տրվել է Սարք(եր)՝ սույն Պայմանագրի դադարեցման (լուծման) դեպքում, անկախ լուծման պայմաններից, Սարք(եր)ը, ինչպես նաև դրանց պատկանելիքներն ու մասերը 5/հինգ/ աշխատանքային օրյա ժամկետում վերադարձնել Օպերատորին սարքին վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը կամ հնարավորություն ընձեռել Օպերատորի մասնագետներին ապամոնտաժել Սարքերը, մալուխը և դրանց պատկանելիքները:

3.4.8. Նշված սարքերի վնասման դեպքում բաժանորդը կրում է լիակատար նյութական պատասխանատվություն, սույն ակտում նշված արժեքի չափով:

4. Սարքի օգտագործումը, պահպանումը

4.1. Բաժանորդի կողմից «START», «PREMIUM», «FAST», «BEST» կամ «SUPER» սակագնային պլանը մեկ տարի ժամկետով Բաժանորդագրվելու դեպքում, Օպերատորը օգտագործման իրավունքով տրամադրում է Բաժանորդին Wi-Fi սարք:

4.2. Օպերատորը Բաժանորդին օգտագործման նպատակով հանձնած Սարք(եր)ը հետ է վերցնում նրանից, Կողմերի միջև կազմված փոխադարձ հանձնման-ընդունման ակտով, որը կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.3. Սարքի սխալ օգտագործման, պատահական կորստի, վնասվածքի կամ հափշտակության ռիսկը փոխանցվում է Բաժանորդին Սարքն ընդունելուց և հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:

4.4. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին տրամադրված Սարքն անվճար փոխարինել նորով, եթե Օպերատորի կողմից այն ճանաչվել է արտադրական թերություն ունեցող:

5. Կողմերի պատասխանատվությունը՝

5.1. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Բաժանորդին պատկանող համակարգչի(ների) կամ այլ սարքավորումների անսարքության պատճառով Ծառայությունների թերի ստացման կամ խափանումների համար:

5.2. Օպերատորը վերահսկողություն չի իրականացնում իր ցանցով տեղափոխվող տեղեկատվության նկատմամբ և պատասխանատու չէ Բաժանորդի կողմից ստացված տեղեկատվության և բովանդակության ճշտության համար: Օպերատորի ցանցի միջոցով տեղափոխվող ցանկացած տեղեկատվություն կամ բովանդակություն օգտագործվում է բաժանորդի ռիսկով:

5.3. Բաժանորդն իրավունք չունի այլ անձի օտարել կամ փոխանցել սույն պայմանագրով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները: Բաժանորդը Օպերատորի համար հանդիսանում է միակ պատասխանատուն՝ սույն Պայմանագրով ստանձնած իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, վճարումները ժամանակին չկատարելու, ինչպես նաև Օպերատորին պատճառած իրական վնասի համար:

5.4. Բաժանորդը Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններից օգտվում է սեփական ռիսկով: Օպերատորը չի կարող որոշել Ծառայությունների համապատասխանությունը Բաժանորդի կարիքներին:

6. Ծառայությունների մատուցման սահմանափակումը, կասեցումը, դադարեցումը և վերաակտիվացումը

6.1. Օպերատորն իրավունք ունի կասեցնել, սահմանափակել կամ դադարեցնել Բաժանորդին մատուցվող Ծառայությունները՝ առանց այդ մասին վերջինիս նախնական ծանուցման, եթե Բաժանորդը՝

- սահմանված ժամկետում չի վճարել իրեն մատուցված Ծառայությունների համար
- օգտագործել է չսերտիֆիկացված և/կամ Օպերատորի ցանցի հետ անհամատեղելի կամ Օպերատորի ցանցի պատշաճ աշխատանքին խոչընդոտող սարք.
- խախտել է սույն պայմանագրի պայմանները կամ գործող օրենսդրության պահանջները.
- ոչ ճիշտ կամ ոչ ամբողջական տեղեկություն և/կամ փաստաթղթեր է ներկայացրել Օպերատորին/
- սույն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները ոչ պատշաճ/ոչ բարեխիղճ/ է կատարել.
- Սարքի կորստի կամ հափշտակության դեպքում.
- երրորդ կողմի պատճառով առաջացած ազդանշանների ուշացումների, դադարեցումների կամ կապի խզման դեպքում:

6.2. Ծառայությունների մատուցման կասեցման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում վերաակտիվացում և/կամ վերամիացում կարող է կատարվել Օպերատորի նկատմամբ ունեցած կանխավճարը, վճարային պարտքը, տույժերը, եթե այդպիսիք հաշվարկվել են, վերաակտիվացման համար գանձվող վճարը և Օպերատորի կողմից կատարած աշխատանքների դիմաց վճարները և այլ փաստացի կատարված ծախսերը՝ Բաժանորդի կողմից վճարելու դեպքում միայն:

6.3. Եթե Բաժանորդը հանդիսանում է մեկից ավելի Ծառայություններից օգտվող և սույն պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարում որևէ մեկ Ծառայության համար, Օպերատորը կարող է կասեցումը կամ սահմանափակումը կիրառել մնացած բոլոր Ծառայությունների համար ևս:

6.4. Օպերատորի կողմից Բաժանորդին տրված սարք(եր)ը և այլ պատկանելիքները սեփականության իրավունքով պատկանում են Օպերատորին:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրը կնքվում է 1 (մեկ) տարի ժամկետով: Պայմանագիրը համարվում է յուրաքանչյուր անգամ երկարաձգված նույնքան ժամկետով, եթե Կողմերից մեկը սույն Պայմանագրի ժամկետը ամեն անգամ լրանալուց 30 օր առաջ գրավոր ծանուցմամբ չեն հրաժարվում դրանից:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որոնք կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և նման այլ իրավիճակներ, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուսին:

9. Կողմերի պատասխանատվությունը և վեճերի լուծման կարգը

9.1. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

9.2. Սույն պայմանագրից ծագող վեճերը ենթակա են կարգավորման Կողմերի համաձայնությամբ՝ անմիջական բանակցությունների միջոցով՝ 10 օրվա ժամկետում:

9.3. Վեճը բանակցությունների միջոցով չկարգավորվելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է վեճի լուծումը հանձնել արբիտրաժային տրիբունալին՝ դիմելով «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամին՝ նշված հաստատության արբիտրաժային կանոններին համապատասխան և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վեճը լուծելու համար»:

9.4. Վերոգրյալը չի սահմանափակում խախտված իրավունքների պաշտպանության հայցով իրավասու դատարան դիմելու Պայմանագրի կողմի իրավունքը:

10. Եզրափակիչ դրույթներ

10.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու և կնքելու պահից,

10.2. Սույն պայմանագրով ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն Պայմանագրի հավելվածները, ակտերը, Ծառայությունների վերաբերյալ ընդհանուր դրույթները և պայմանները նրա անբաժանելի մասն են կազմում:

10.3. Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը, որ ծանոթացել է սույն Պայմանագրի պայմանների և դրույթներին, «Ծառայություններին ու Սակագներին»:

10.4. Սույն Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից՝ հայերեն լեզվով, սակայն կարող է թարգմանվել և հրապարակվել /այդ թվում նաև սակագները, կանոնները և հավելյալ ծառայությունների համար գնացուցակ/ նաև այլ լեզուներով: Հայերենի և այլ տարբերակների միջև հակասության դեպքում կգերակայի հայերեն տարբերակը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

10.5. Սույն պայմանագիրը բաղկացած է 4 էջից:

11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Օպերատոր»		«Բաժանորդ»
Կատարող:	«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	Ա/Ա/Հ
Հասցե՝	ք.Մասիս նոր թաղամաս 20/2	Հաշվ. հասցե՝
ՀՎՀՀ՝	03810127	
Պետ ռեգ.	77.110.01009	Տեղ.հասցե՝
Բանկ՝	«Արդշինբանկ» ՓԲԸ, Մասիս մ/ճ	
Հ/Հ:	2472900840910010	Անձ.տվյալներ
Էլեկտրոնային հասցե: ՝	info@masisnet.net	Էլեկտրոնային հասցե:
Հեռ.՝	077-570-222	Կոնտակտային
Տնօրեն՝	Էդմոնդ Ստեփանյան	հեռախոսահամար:

✓ _____
(ստորագրություն)
Կ.Տ.

✓ _____
(ստորագրություն)